

ԲԱԺԱՆՈՐՈՂ ԱԳՐՈՒԹԻՒՆ  
 ուղարկող համար  
 Տարեկան 10 Ձր.  
 Վեցամսեայ 5 »  
 բնասանկանի հա-  
 մար Տարեկան 12 »  
 Վեցամսեայ 6 »  
 Անկրկայի համար  
 Տարեկան 2.50 զր.  
 Վեցամսեայ 1.25 »  
 ԿԱՆԻՒԿ ՎՃԱՐՆԵԼԻ

# ՇՆԱՐԹ

Редакция на вѣстникъ  
 «Шаржумъ»  
 Варна.  
 Redaction du journal  
 «Charjoum»  
 Varna (Bulgarie)

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ. ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆ  
 ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԻ ՉՈՐԵՔՇԱՐԹԻ ԵՒ ՇՆԱՐԹ ՕՐԵՐԸ

Գրութիւնք ևս չեն տրուիր

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)

(ԳԻՆ 10 ՄԱՆԹԻՄ)

ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ Յ. ՍՈՒՔԻԱՍԵԱՆ

## ԻՆՉ ՊԻՏԻ ԸՆԵ ԱՐՏԱՍԱՃՄԱՆԸ

Հեռագիրներն ու նամակները հեռագրեմէ աչրոյ լուրեր կը բերեն հայրենիքէն. ամառուան տաքերուն հետ կեցելի թուրքին ու քորտին մէջ քնայած գաղա- նութիւններն սկսած են արթն- նալ. հոս կը սպաննեն, հոն կը թախեն, և ասոնք կը կատարուին անոնց յեղափոխականներու կողմէ պատճառ տրուելու: Անոնք որ համը առին հայուն միտին ու արիւնին, չեն կրնար հանգստանալ. միշտ պիտի պատառնու- րզկտեն, քանի որ կը պահեն ի- րենց ժանիքներն ու մազիլները, և թեքեա նորէն վերսկսին 94- 96ի արիւնոտ տեսարանները:

Կառավարութիւնը շինծու վա- խերով, կասկածներով բռնուած յանցաորները պատժելու ե- րեւութիւն տակ հարիւրներով ան- մեղներ կը թիւ բանտերը: Եւ երբ այս պաշտօնական և անպաշտօն խոզիութիւններուն վրայ աւելցնենք տիրող թան- կութիւնն ու սովը՝ կրնանք ամ- բողջական գաղափար մը կազմել այն դժոխային միջավայրին վրայ, որ Թուրքիա կը կոչուի:

Օրմանեան էֆէնտին, հայոց դաւաճան Պատրիարքը, մինակ մնացած, սանձարձակ կը դիմէ ամէն սորունութիւններու. ոչինչ կը տեսնէ հայուն քաջածնեան, մազի չափ չաշխատիր ազգային տառնապանքները փոքր ինչ մեղ- մացնելու, և բոլոր ուժովը կը ճգնի ազգին յետին իրաւունք- ներն ալ ծախել և ձեռքերն ու ոտքերը կապած, կաշկանդած նետել Սուլթանին գիրիւր:

Ու մեր տարաբախտ եղբայրնե- րը իրենց արիւնաքամ աչքերով մեղի կը նային, բան մը կը սպա- սեն:

Ի՞նչ պիտի ընէ արտասահ- մանը:

Բայց ի՞նչ րբաւ արտասահ- մանը մինչեւ հիմա:  
 1895ի և 96ի յեղափոխական

չարժումներէն ետքը, մտաւոր յաջողութիւնով մը արբելի՞ն՝ ծա- փահարեց, և քիչ մըն ալ դքամ տուաւ, և յետոյ երբ տեսաւ որ իր ակնկալութեանց մէջ սխալած է՝ սկսաւ հայհոյել յեղափոխու- թեան, և կամ թող տուաւ որ խաչագողները ու կարմիր խաչի կեղծարարները լրբաբար յար- ձակին, թքնեն ամէն սրբու- թեանց վրայ, անտարբերութեամբ գիտեց, որ քանդուին երկար տարիներու ճիգերովը և հազար նահատակներու արիւնովը շա- զախուած մեր փրկութեան միակ սպասէնները:

Արտասահմանը՝ գաղթականու- թեան, սրբերու, սովի համար հանգանակութեան ձեռնարկեց, ներկայացուցին կազմակերպեց. բայց շուտով յոգնեցաւ իր ը- րած զոհողութիւններէն, երեսը դարձուց անոնցմէ. սկսան տե- զացիի և եկեօրի. իմի-քուկի անյերջ և անխնայ վէճեր ու կռիւներ:

Արտասահմանի մէջ քանի մը տեղեր օտար զբաղէտներու և զիրաւուններու դիմուեցաւ, որպէս զի ի նպատակ մեղի ձայններին բարձրացնեն: Բայց ի՞նչ օգուտ որ, երբ անդին օտար թերթերը խոչոր սիւնակներ կը նուիրեն մեղի համար, հայը կը շարու- նակէ թախնուիլ, սպանուիլ և կամ մեռնիլ անթութեանէ:

Վերջապէս արտասահմանի մէջ միթիւնկներ կազմակերպեցին, բայց Խաղաղութեան Վեհաժողո- վը ալանջ չի կատարեց մեղի, և նոյն իսկ այդ ժողովի օրերուն իսկ թուրքը աներկիւզ կը շա- րունակէ իր հայաջինջ գործը:

Ահա մեր արտասահմանի ամ- րուջ գործունէութիւնը իր գրա- կան ու բացասական կողմերով:

Կրնա՞նք համարձակ կերպով ըսել թէ՛ արտասահմանի հայու- թիւնը ըրաւ ինչ որ կրնար և ալ ուրիշ բան չի մնար իրեն, բայց եթէ լուս հանդիստեքը գտնուի հայրենիքի խորոյկին վրայ ողջակիզող հայութեան հատնումին:

Եւ կամ հասկնալով որ մինչեւ հիմակ սխալ ուղղութիւն մը

բռնած էինք, քաջութիւնը պիտի ունենանք սրբագրելու այդ սխալը. օտար տակ տալու բոլոր վայրերան բուերը, անամթ զնչոները, և մեր բոլոր ուժովը փաթտուիլ այն գաղափարին որ զէնքը կը քարոզէ. քանի որ անոնց ազոր խաղաղասէրներն ալ մեր ձայնը չեն լսեր:

Հայրենիքը մեղի կը նայի: Ի՞նչ պիտի ընէ արտասահ- մանը:

ՎԱՀԱՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆ

### ԿՈՎԿԱՍԻ ԿԱՌԱՎԱՐՉԱՊԵՏԻ ՉԱՐ ՄՏԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Իշխան Գալիցիին ուսաստայերի նկատմամբ Յարին ներկայացրած տեղեկագիրը մի ահեղ ուսմբի նման պայթեց: Հեռատես հա- յերի շր՝ անուամի ընդհանուր և արդար զայրոյթ է տիրում. այդ տեղեկագիրը նկատվում է որպէս մի «գամբանական» ուստատանի հայերի համար:

Այդ չարագուշակ գամբանա- կան—տեղեկագիրի համարեա մե- ծաղայն մասը արդէն սկսվել է գործադրվել, «Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութիւնը» իր բազմաթիւ մասնաճիւղերով ամբողջական գատապարտվելու աստիճան սահմանափակվեց և ենթարկվեց կովկասի կառավար- չապետի կամոյականութեան. մի փոքր և երեւակայական զեղծում բուական պիտի լինի անմիջապէս և բոլորովին լուծելու ընկերու- թիւնը և նրա ստացւածքը կա- ռավարութեան սեփականացնե- լու. այդ էլ շուտով տեսնելու ենք...:

Լրագրութիւնը արդէն են- թարկել է ամենախիստ սեղմում- ների: «Նրձագանք» խափան- վեց, Ռուբէն Բէրբերեանի հրա- տարակելիք «Կեանք» հանդէսը դեռ չը ծնված մեռա՞ւ... Իսկ արդէն հրատարակողներն էլ տագնապայից ճգնաժամեր են անցնում «ցէնչուրոնի ճնշման տակ. ամէն բան չեն կարող հրա- տարակել, և մի փոքր պատճա- ոսով իսկոյն խափանվելու են:

Նոյն բախտին են ենթարկուելու հայերի կողմից հրատարակւած բուն ուսերէն թերթերը:

Հայ կղերականութեան իրա- տունքները բռնաբարվում են. ա- ւանց պատճառի այս ու այն կղե- րին հեռացնում են Էջմիածնից և կամ արձակում պաշտօնից, և ոմանց էլ աքսորում... Կա- թոլիկոսի հեղինակութեան վրայ խօսելն իսկ աւելորդ է. պարզ վանահայրերից էլ աւելի ցած գիրքում է գտնվում. մեր Ատա- պատականի առաջնորդները կա- թոլիկոսներից հազար անգամա- ւելի գործելու աղատութիւն են վայելում և բարձր հեղինակու- թիւն ցոյց տալիս Շատ ժամանակ չի անցկենայ, որ կառավարու- թիւնը իր արջի թաթը պիտի դնէ մեր եկեղեցու վրայ: Եկե- ղեցական և վանական մատակա- րարութիւնը պիտի անցնէ կա- ռավարութեան ձեռքը, և հայ կղերները իրանց սոճիկները ստանալու են կառավարութիւնից և նոյն իսկ ձեռնադրվելու են կառավարութեան «վետոյով» և ոչ թէ հայ ժողովրդի ցանկու- թեամբ...:

Իսկ գայրոցների վրայ չարժէ խօսել... Նրանց գամբանա- կանը վաղուց է կարգապել: Այժմ մեր ուսաստայ մատուղ սերունդը կրթվում է իբրև ուս... ուսական գայրոցնե- րում: Գալով մասամբ բաց մնա- ցած «Թեմական գայրոցներին», նրանք էլ քիչ օրից ենթարկվե- լու են միւսների բաղդին...:

Չը գիտենք թէ մեր ուսաստայ եղբայրները ի՞նչ գիրք են բռնելու, եթէ ոտնձգութեան կարգը մեր եկեղեցիներին դա- լու լինի. թոյլ պիտի տա՞ն, որ մեր գարաւոր և հայ արիւնով նուիրագործուած հայկական ե- կեղեցին հիմնայապակ կործա- նի... Ապագան ցոյց պիտի տայ այդ:

ՄԻՐՉԱ

Թաւրիզ, 16 Մայիս  
 ---)(---

ԲԱՐԻՉԵԱՆ ԱԶԱԳԱՆԳ

Բարիչի հայերը ո՛չ յեղափոխական են և ո՛չ ալ ազգասէր. եթէ յեղափոխական չէին կարող լինել՝ գէթ իրենց հայրենիքը սիրել, անոր օգտին աշխատիլ իրենց պարտականութիւնն էր:

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ՅԵՂԱՓՈՒՅԻՆԻՍ

ԹԷ ԵՄԻՂԱՏՈՒԹԻՒՆԻՆ

(Շար. նախորդ թիւին)

Ե. Վինիցա գաւառում 1897ին մի յեղափոխական խումբ սպանեց Քեազիմ բէյին: Սուղարկութիւններն սկսուեցան: Չերքակալեցին անգլին թիւ մարդիկ, որոնց մէջ էր և Վինիցայի կօմիտէի անգամ ի վան Պետօկը: Յայտնեցաւ նրա յեղափոխական լինելը: Տանջանք, ձեռն... ամենազարհուրելի տեսակներից է ի վանը չգիմացաւ. մատնեց զէնքի պահեստը և մի քանի թղթերի տեղերը: Այդ տեղից նոր խուզարկութիւններ ու նոր ձերբակալութիւններ առաջացան, հետո էլ նոր մատնութիւններ: Բռնուեցաւ կօմիտէի միւս անդամը ևս՝ Դասկալօվը: Վերջինիս տանջանքն աւելի խիստ էր, քան միւսներինը: Դասկալօվ չը կարողացաւ դիմանալ. խոստացաւ զէնքի մնացած պահեստն էլ ցոյց տալ: Ոստիկաններով շրջապատուած տանում էին նրան փողոցով պահեստը ցոյց տալու: Գետի վրայի բարձր կամուրջը անցնելու ժամանակ Դասկալօվի հերոսական հոգին մի ուրիշ ինչի աքնաբանեց. երիտասարդ ուսու-

նէ և ո՛չ միւսը: Վանի սովետալներու լուրը, ինչպէս ամէն կողմ, նոյնպէս ալ հոս արձագանգ գտաւ առաջին օրէն իսկ, ու մեր Բարիչաբնակ ինքնակոչ «ազգասէր» հայերը հազիւ սթափեցան ու 2—3000 Քր. հաւաքելով զր'եցին. մինչ ամէն կողմէ իրենցմէ հարկաւորացատիկ նուազ հարուստ հայեր բազմաաբար շատ մեծ գումարներ զրկած էին: Այն հարուստը որ հոս հազարաւոր Ֆրանքներ չը խնայեր իր անձնական կիրքերուն զոհացում տալու, զլացաւ իր սանդիմը իր ազգին անուշը կիտք սովամահին. ու այսպիսի աչտոտ մարդիկ են որ ախմարօրէն ինքզինքնին հակայեղափոխական սակայն ճշմարիտ հայրենասէրներ լլեցնել կուտան իրենց շուրջը ծկլացող սողուններուն, ու չեն տեսնել թէ գիտակից միտք կրողը իրենց քիւն կը խնդայ: ՎԱՀԱԳԵ

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիւ-Եօրթ, 3 Յունիս

Ամերիկայի հայ գաղթականութիւնը, իր շատ մը թեքութիւններով հանգերձ, հայ գաղթականութիւնը մէջէն նիւթապէս ամենէն շատ օգնութիւն ըրած է մայր երկրին: Բայց շատ աւելի ճիշդ պիտի ըլլար ըսել թէ այս գաղթականութեան մէջ որոշ գաղթականներ եղած է որ միշտ ու միշտ ի նպատակ ամէն ազգային բարենպաստակ հանգանակութեան

մասնակցած է: Եթէ գաղթականութեան բոլոր անդամները, կամ գէթ կէսը, այս պարտաճանաչ գասակարգին չափ զոհող ըլլար, ապահովաբար ամէն տարի 25,000 տօլար, առանց թեթեւ բեռ մը ըլլալու, կարելի պիտի ըլլար նոր իրելազգին որ և է կենսական պէտքի մը համար: Հնչակեան կուսակցութեան յուսալից ու կենդանի օրերուն նշան կարգապետեան և ուրիշ հրապարակախօսներ հաշարաւոր տօլարներ հանգանակած են զարձեւալ այս գասակարգէն: Չօհող ու եռանդուն երիտասարդութիւնը ամէն հրապարակային ժողովի մէջ իր նիշար քաղցր պարպած է յեղափոխութեան գանձանակին մէջ: Գիտաբար վերջերս այնքան յաճախ ու մեծ կակ հանգանակութիւններ չեն ըլլար յեղափոխական այս կամ այն կուսակցութեան համար: Ամիսներ առաջ Դաշնակցական և Հնչակեան կուսակցութիւններու Լօրէնսի մէջ ըրած հրապարակային աննշան հանգանակութիւններէն ի վեր սէնթ մը հաւաքուած չէ յանուն յեղափոխութեան: Չօհող երիտասարդութիւնը պիտարակելու ալ չէ ասոր համար. պախարակութեան, արհամարհանքի արժանի է այն անասարքեր քարացած մեծ գասակարգը, որ ամէն զոհողութիւն թողուցած է փոքրամասնութեան վրայ: Յեղափոխութեան գանձանակէն վերջ, հետզհետէ, երիտասարդութեան առջեւ բերուեցան հազարաւոր որբերու, անօթի Ձէյթունցիներու գանձանակը, և

վերջին օրերս ալ Վասպուրականի անհամար սովեալներու գանձանակը: Չօհողութեան վարժուած անկեղծ երիտասարդութիւնը ասոնց ամէն մէկին մէջ նետեց իր լուսմաները: Ամերիկայի բոլոր հայ գաղթականութեան զոհող գասակարգը երկու շտաբով է ի վեր իրարու ետեւ հրապարակային ժողովներ, հանգէտներ, թատրոններ սարքեցին ու հազարաւոր տօլարներ հանգանակեցին, ուստանջ Վասպուրականի համար: Փրօվիտէնսի հայերը 800 տօլար հանգանակած են. բայց երգում ըրած են այս գումարը Պատրիարքարան չըրկելու, մինչև որ կողիկ հազարը չըլլանայ: Քօնքըրտի սփ մը հայերը 50—60 տօլար զրկեցին Պոսթօնը 200էն բաւական աւելի զրկեց: Ասթըրը, Ամերիկայի հայոց Երեւոզէմը, զարմանալի անտարբերութիւն ցոյց տուաւ այս հանգանակութեան մէջ: Չենք կարծեր որ Սարաճեան եպիսկոպոսի աթոռը հոն ըլլալուն վերադրելու է այս, քանի որ, հակառակ իր ուրիշ գործերու մէջ ցոյց տուած անտարբերութեան, Վանի սովեալներու հանգանակութեան նպատակը համար աշխատեցաւ և կաշխատի: Ի՞նչերու կը հետաքրքրուիք գիտնալ թէ այս գաղթականութեան ամենէն բազմամեծը, ամենէն զարգացած ու հարուստ նիւ-Եօրթի գաղթութիւնը քանի հազարներ հանգանակեց... 200 տօլարէն քիչ մը աւելի, ան ալ ձրիաբար չը տուինք: Եսթաթներ աշխատեցաւ քաղաքիս

խորապէս, ամէն մի անհատի դայրոյթը պիտի գրգռեն: Լէվթա, Ալատաղլիա, Ինիս և Դերվիշթա-Մօզլա գիւղերը աւերակ են զարձեւ: Այդ գիւղերից այրեր, կիներ և երեխաներ բերած լցած են Մ. Փաշայի մէջ: Խոնաւ բանտերը, ուր կրում են այն բոլոր զօրեղան տանջանքները, որ կարող է ստեղծել տեղական գալմազամ իզդէա-պէյի ուղեղը: Թուրք ժողովուրդը, ինչպէս նաեւ զօրքերը՝ գիւղացիները բացակայութիւնից օգտակար, մըտնում են գիւղերը, բոլոր արժէքաւոր իրերը հաւաքում և տները կրակի մատնում: այնպէս որ մի քանի ժամից յետոյ այդ շէն գիւղերից միայն մոխիրի կոյտեր են մնում: Եւ զիտք ինչի համար է լինում այդ բոլորը: Դա կատարում է, որովհետեւ մի քանի օր առաջ Մ. Փաշա գաւառում, էշէլէզլի կոչած անտառի մէջ երեւեցաւ ապստամբների մի խումբ, որ 8 ժամ կռիւ անհրաժեշտ յետոյ՝ կարողացաւ յետ մղել տաճիկ զինուորները պահակը: Չոկաբը բազկացած է եղել 300 զինուորներից և բաշիրօզուգներից, որոնք թողել են 20 սպանածներով 30 վիրաւորներ: Այդ պատճառով գալմազամ իզդէա բէյը բանտարկեց վերոյիշեալ գիւղերի բոլոր բնակիչներին: Դրանից յետոյ զօրքն ու խուժանը, իզդէտի հրամանով, գիւղերը մտան, ամէն բան աւեր ու մոխիր գործրին: 8. Տողերս գրեւոյց հազիւ 10 օր

առաջ, Մակեդոնական մի կրկու նոր չեսաներ անցնում են սահմանը, մանուկ Մօնաթըրի վիլայէթի Պրաւաթիա գաւառը, բնդհարումներ ունենում զօրքերի հետ և այլն: Վալին հրամայում է զօրքերին բռնել Պրաւաթիա քաղաքը: Բազմաթիւ սպանութիւններ են լինում... զօրքը գիւղերը ցած չէ: Դրական տեղեկութիւններ չկան, թէ և Պրաւաթիան քիւրդի տակն է: Այսօր քանի միայն յայտնի է, որ բաւակային լայն ձաւալ է առել չեսաների «յիմարութիւնը»... և բուլղարական այրուածին զէպի սահման է գնացել... Ետպով քաղաք այս փաստերը, մեր կարծիքով, լիովին բաւական են ապացուցանելու համար, որ Մակեդոնական շարժումը բոլորովին նման է հայկական շարժման. փոխւած են միայն տեղերը և մարզկանց անունները: Եւ այդպէս են ոչ միայն մակեդոնացիները, այլ և բուլղարները, կրկնացիները, յոյները շարժումները... Ո՞րքան ոգորմնիկ են ուրեմն այն խեղճ «գրագէտները», որ ուզում են մեզ իրր իզլալ ցոյց տալ Մակեդոնական կազմակերպութիւնը և շարժումը: Մեր կարծիքով՝ գաստանում է յեղափոխական պատմութեան մէջ այդ գրագէտների ունեցած անհուն սպիտակութիւնից և զրկելի մեծամտութիւնից... չգիտեն

գերասանական խումբը և ամենէն զարգարուն թատերասրահներէն մէկուն մէջ Արշակ Բ.ի ողբերգութիւնը ներկայացուց, ինչպստ սովելոց, և շնորհիւ ալ Տօքթ. Յ. Արշակունիի ջանքերուն տոմսերը վաճառելու մասին, հազիւ 218 տօլար գոյացուեցաւ:

Նիւ-Եօրքը այսպէս է. անտնկ դիւրութեամբ, չփշոր գրամ չիտար. ամէն բանի մէջ ճաշակը կը փնտռէ. փոխանակ սօլար մը պարզ հանգանակութեան տալու, Նիւ-Եօրքի հայը կուտայ սօլարը և միեւնոյն ժամանակ թատրոնի մը կամ նուազահանգէսի մը հանգը կը վայելէ: Բայց գործարաններու մէջ շարաշար աշխատող ու արխն քրտինքով չնչին շարաթական ստացող Փրօվիտէնցիք 1,000 սօլար պիտի զրկեն Վասպուրական, մենք գէթ 2,000 մը զրկելու չենք. հաճոյստիւթիւնն ալէկ. քիչ մըն ալ պատուասիրութիւն և նախանձախնդրութիւն պէտք չէ. թատրոն եկող չեկող ինչո՞ւ հանգանակութեան մըն ալ չեն սկսիր:

**Պուրկազ 4 Յունիս**

Պուրկազի գաւառացի պանդուխտ հայութեան կեանքը օրէ օր վատթարանալու վրայ է. դրեթէ գործ չկայ. եղածն ալ աննշան կրնայ սեպուիլ. քանի մը գաւառացի անխիղճ ազրուկներու շնորհիւ, որոնք չառնջ անունով ճանչցուած են հրապարակի վրայ, և որ մէկըմէկու ձեռքէ գործ խլելու բուռն աննշանքէն

մղուած՝ վարկեան մը իսկ չեն վարանիր ամէն տեսակ անվայել ու ցած միջոցներու գիծել. այն պէս որ, շնորհիւ այն անխիղճ չառնջներու, մշակ դասակարգի օրավարձը օրէ օր աստիճանաբար կը կտրորուի: Այժմ խեղճ գաւառացի գաղթականներու վիճակը այն աստիճանին հասած է, որ գործաւոր մը մինչեւ երեկոյ շարաշար աշխատելով հազիւ հալ իր նոյն աւուր օրապահիկը կրնայ հայթհայթել: Երբէք մի վարանիք, երբ ըսեմ թէ՛ երկրորդ օրը եթէ չաշխատի, ստիպուած է անօթի մնալ: Ասոնք որքան որ մինչև հիմա կրցած են իրենց գոյութիւնը քաշկըռտել, կը պարտին խոհարարներու ապառիկ տալուն: Խոհարարներէն չկայ մէկը այսօր, որ 50—100 սոկի առնելիք չունենայ այդ գաւառացի հայ մշակներու վրայ: Ահա հաշիւ մը որ իր մէջ կը պատկերացնէ գալիք անտանելի հետեւեալքը:

Այդ խեղճերը երկար ժամանակ կուտելով կեանքի սոյն անհասարակ պայմանների հետ, թերեւս դեռ չեն կրցած ճանչնալ իրենց շահերուն վատագոյնը. հակառակ տարրը, որ սղջուկի նման անդադար կը ծծէ իրենց քրտնախառն արիւնը, և որ վաշխառուներու յատուկ ամէն տեսակ անխիղճութիւնն ի գործ կը դնէ իր արամազրութեան տակ գտնուող խեղճ գասակարգին վերաբերութեամբ: Վերջիններս ալ, ազիտութեան պատճառով, խոնարհաբար կը կրեն այդ զաղ-

րելի ուտիչ որդերու փոսխտիցաւը:

**ԳիՏՈՂ**

**Սօֆիս, 7 Յունիս**

Մայիցոնիայէն սրտատուչ լուրեր կուգան: Հայաստանի տոտապանքներուն բազմակից այդ երկիրը կարծես մահաւան արհաւիրքներու մէջ կօրօրուի: Համիտական բարենորոգումներու արիւնշալի ծրարիքը այս անգամ աւելի յանդգնօրէն կը գործադրուի: Բրիլէք, Սքօթքա, Վէշէլ եւ այլ սեղեր կատարեալ սպանդանոց են դարձեր: Եւ որպէս զի խորամանկ թուրքը իր արարքները սքողէ, Աօրա մը առաւ Պուլկար կառավարութեան, որով պատասխանատու կը նկատէ Պուլկար կառավարութիւնը ծուգելիք խոտովութիւններու հետեւանքներուն: Տեղիս կառավարութիւնը փութաց պատասխանել Սուլթանին, բայց կրէքօլի պատասխանը բնաւ բոււրարութիւն չի առաւ ազգային ալքձուփ զգացումներուն:

Մաքերը հոս խիստ գրգռուած են: Կուր կը պատի թէ խորագիտ Սթօյօ վոյվօտան իր հրոսխմբով սահմանի քովերը ընդհարում ունեցեր է պուլկար եւ թուրք զօրքերու հետ: Ուրիշ հրոսխմբու մըն ալ Բօսօք պայքաններէն անցեր է: Ուրիշ խումբեր ալ պատրաստուելու վրայ են: Մակեդոնական յեղ. կապակերպութիւնները սենդալին գործունէութիւն կը ցուցնեն: Ասոնց շքրջանի մէջ կը խօսուի, թէ հայերու հետ ալ բանակցութիւն ունին: Ընդհանրապէս ողբերգութիւնը մակեդոնացիներու մէջ աչքի կը զարնէ: Նոր հրոսխմբերու առաջն առնելու համար կառավարութիւնը նոր զօրք ուղարկեց սահմանը, ուր արդէն 3 վաշա կայ: Խիստ հրամաններ գացած են սահմանագիծ վարչութիւններուն աշտուրջ հսկելու սահմանի վրայ:

Սակայն թուրք կառավարութեան աչքը միշտ հոս է: Մակեդոնացիներու ընդհանուր ժողովը, որ այնքան ազմուկ հանեց՝ մագնիսի մը պէս հոս էր քաշեր Պօլսէն լրտեսներու բանակ մը, որոնք ամէն տեղ սողոսկելով շատ բաներ կրցած են անշուշտ իմանալ: Այդ լրտեսներու մէջ էր նաեւ երբեմն հայ յեղափոխական գաւառացի գործիչ մը, որ այսօր շնական հաւատարմութիւնով մը իր Ոճրագործ տիրոջը կը ծառայէ, դնելով անոր արամազրութեան տակ խորամանկ հայու մը ամէն յատկութիւնները: Իր ներկայութիւնը իմացուելուն օրն իսկ ասուպի մը պէս անյայտացաւ: Կա գիտէր թշուառականը. թէ ինչպէս կը հիւրասիրուի հայ յեղափոխութեան գաւառացիները...

S.

**ԱԶԳԱՅԻՆ ՔՐՈՆԻԿ**

Վանէն, Մայիս 5ին կը գրեն «Մշակ»-ին:

Վերջին օր կաթողիկէներու 7 որբեր եւս փախան և տեղաւորվեցան Վարագայ մէջ: Այս որբեր փախած ժամանակ պատըսպարված էին մի տան մէջ. բէռներն իմանալով զրկեցին իրենց կազմը և կարգ մը իրենց ծառաները, ուղեցին ծեծելով կրկին սանիլ որբանոց: Հակառակ անոնց սպառնալից և համոզման, որբերն միշտ այս պատասխանը տուին, թէ լաւ կը համարին մեռնիլ, քան կրկին բէռերու սրբանոցը մտնել:

Մինչ այս մինչ այն, հասաւ մեր առաջնորդարանի կողմէն զրկած կազմը և քահանայ մը:

և գրում են. չգիտեն և չեն էլ ուզում սովորել...

Այո՛, Պ. Պ. Չօպանեաններ, Արշակունիներ եւ ընկերութիւն. նախ քան ուրիշներին սովորեցնելը՝ նախ եւ առաջ ինքները սովորեցէք, այն էլ շատ սովորեցիք:

Նախ քան յողածիս վերջին մասին անցնելը, չեմ կարող զայրոյթիս զսպել մի երեխայամիտ ու ստոր վարմունքի վրայ:

Պ. Չ. չբաւականացաւ. վարժապետանի, Բաֆֆու եւ ուրիշները գերեզմանները փորելով, նրանց փառքը նսեմացնելու, և իր արհամարհելի մըջնային մեծամոլութիւնը առաջ քշելու համար: Նրանց գիտկաները կրճատելու գործողութիւնից աւելի կատաղած՝ սկսեց մի աւելի գարշելի քայլ անել:

«Կասեմ գործելու այն անբարոյական մեթոտը որով գործիչներ գողունի կը մտնեն Վան կամ ուրիշ քաղաք մը, զէպք մը կը բռնկցնեն ու կը փախչին...» ասում է Պ. Չ.: Եթէ այս նախադասութեան մէջ Վանի անունը չլինէր, այլ Պօլսի մենք չէինք վրդովի: Այս սեղ «Վան» ասել են որոշ նոպատակով... Մի համարձակելք, գարշելի հրէշներ, վիրաւորելու աշխատել այն սուրբ հերոսութիւնները, որոնցով պատկեցան Պետօները, Մարտիրոսները, Աւետիսեանները, Վազգէնները, Շէքօները... Վանը նրան

ցից ջոկ՝ ուրիշ հերոսներ չունի: Նրանց յիշատակի առաջ ծուռ դնելու է եւ ոչ լպիրջ ակնարկներով նրանց «փախուստ» և այլ յատկութիւններ վերագրելու: Նրանք սուրբ են ու սնման ամէն մի մարդու հայր համար՝ ինչ կուսակցութեան էլ պատկանի նա:

Վանի անունը մի խառնէք խօսքի մէջ այս ու այն կուսակցութիւնը եւ նրանց հերոսների յիշատակը նսեմացնելու համար:

Մեր եւ միւս ազգերի շարժումների մէջ մի հատ միայն տարբերութիւն կայ, այն էլ ոչ սկզբունքի, այլ գործելու եղանակի խնդիր է: Այդ միակ տարբերութիւնը այս դարու սկզբում այստամբած յոյների և մեր կողմից Պօլսում գործելն է: Միւս ազատուած կամ ազատող ազգերը Պօլսում չեն գործել. կամ աւելի ճիշդ է ասել՝ նախաձեռն չեն գործել:

Համառոտակի քննենք այն պատճառները, որ ստիպեցին Հայերին և մասամբ էլ յոյներին՝ գործել մայրաքաղաքում:

Յոյների անկախութեան շարժումն սկսած է դեռեւս անցեալ դարի վերջերից, երբ տաճիկ պետութիւնը դեռ ևս կանգուն ու ամուր էր. դեռ նա չէր արժանացել մեռնելու և այն էլ չուտ մեռնելու գատապարտուած «Հիւանդ Մարդ» արտգոսին: Այն ժամանակի յոյներն էլ այս

օրւայ հայերի նման ամենապարուկ, բազա, սաքերը համարեմնով մեծացած տարրերից էին բաղկանում: Զարգացած երիտասարդութիւն բուրովի չկար Սպարապի, Աթէնքի փառապան հասարակապետութիւնների երկրում: Բարձր զարգացած գասակարգը ժողովում էր տաճիկ բռնակալութեան սրտում մայրաքաղաքի մէջ:

Դա խիստ բնական է: Բռնութիւնը համեմատաբար միշտ աւելի քիչ է լինում կեդրոններում, քան յետ ընկած խորշերում, ուր ամէն մի սրիկայ, ամէն մի զապթիէ ինքնակալ կայսրից էլ մեծ է, շնորհիւ իր խէնջարի, ատրճանակի կամ հրացանի... Կեդրոնում բռնութեան մասերը լինում են խոշոր, բայց հազադէպ, իսկ խուլ խորշերում նրանք ամէնօրեայ են և խանգարող ամէն տեսակ բարօրութեան ու զարգացման:

Զարգացման հետ միասին կար եւ կը լինի միշտ հարստութիւնը: Կեդրոնում նա աւելի է, քան խուլ խորշերում:

Ուրեմն՝ հարստութիւն, զարգացում կայ, բռնակալութիւն էլ կայ: Եւ ահա այն բոլոր տարբերը, որոնք կամայակամայ ժայթքեցնում են ազատեքեան ձգտումը:

Դրա հետ միասին հաշիւ առնելու է եւ մի խոշոր պատճառ. յոյներն ունէին եւ ունեն Պօլսում մի խիստ բազմաթիւ համայնք, ամփոփուած քիչ ու շատ որոշ թաղերում:

Անցեալ դարի վերջի եւ ներկայ դարի սկզբի յոյները ինչ էլ որ անէին, ինչ հերոսական քաջագործութիւններ ցոյց առին յունական գաւառներում՝ չուտով պիտի ճնշէին... և, որ զխառնորն է՝ պիտի մնար մեռած տան, չպուք է հասնէր Եւրոպայի ականջին... իսկ Պօլսում ինչիքը տարբեր էր նրանց արած ամէն մի քայլը սեղեկագրում էին բոլոր պետութիւնների պետականները... Եւ այս Յունաստանն է. Արիստակէի, Պլատօնի, Սոկրատի հայրենիքը, որ պաշտում է «կլասիք» Եւրոպայի կողմից...

Եւ ահա յոյները գործեցին Պոլսում՝ Յիւլիցէք Փանաթիոնի խաչելը յունական եկեղեցու գլան առաջը... Նրանք գործեցին մայրաքաղաքում մի կողմից՝ մինչեւ որ իրենց հարցը «չինովի ստեր» համարուելու չըջանից ազատեց. իսկ միւս կողմից՝ գաւառներում, մինչեւ որ կուտ ուժեր պատրաստուեցան, մինչեւ որ հնար ունեցան Միսօյոնցիի փառաւոր զիմադրութիւնը առաջ բերել Իբրահիմ փաշայի (Մահմէտ-Ալի խալիփ որդու) 40,000 մամուլակաների դէմ... մինչեւ որ Եւրոպայի միջամտութեան եկաւ:

Գ.Ա.ԽԱՐ

(Շարունակելի)

Մանրամասն հարցաքննութեան յետոյ, որքերն հեծկտանոք իրենց փախչելու պատճառն յայտնեցին. թէ գիշեր ատեն բէռ Սիւօն (որ որքերու կրօնագիտութեան գասատուն է) կուգայ կը մտնէ իրենց ննջասենեակը, գեղանի որքեր կը կանչէ. զիրենք կը համբուրէ և իրենց երեսները կը խածնէ ու զանազան առաջարկութիւններ կրնէ:

Ահաւասիկ այս տեսակ լիրբ անբարոյականներու ձեռքն մնացած է մեր ազգի որքերու ճակատագիրը: Մտադիր են նմանապէս փախչիլ կաթողիկոսներ որքուհիներ, բայց խիստ հսկողութեան տակ լինելով. մինչ ցարդ յաջողած չեն:

Ասիկէ շարժմը առաջ Անտօն վարդապետ Զնդոյեան գնաց Պաշտպալէ հոն եւս փրօփազանդաբնէլու և յաջողած է դրամով և ֆրանսական հիւպատոսի օգնութեան յոյսով կարգ մը միամիտներ խաբել: Վերջապէս այս ամէն բանի առաջը առնելու համար պէտք են ազգային բարձր վարժարաններ և խեղճ ժողովրդեան հաց տալ:

«Մշակոյի Պօլսոյ թղթակից Գիրուկ, իրեն յատուկ հետախնդիր մը կը ցուցնէ, թէ ինչպէս Օրմանեան Երջարչի հետ զաղտնի համաձայնութիւն մը կայացուցեր է իր անձին մէջ միացնելու կրկնիկոյ կաթողիկոսութիւնը և բեկանել տուեր է Ալէքսանտրեան եպս.ի օրինակ որքերութիւնը ու ինչպէս եւրօպայէն, երբ Մանկունի և Գրիգորիս Յովհաննիսեան եպիսկոպոսները կիմանան զաղտնիքը, խառն ժողով մը գումարելու կատարեն երկրորդ ատենապետ Սանփան Ալանեանը՝ Օրմանեան ժողովի մէջ կուրանայ իր և Տատահի զաղտնի համաձայնութիւնը պալատին հետ... ու այդ կտորազրէ պաշտօնապէս... և այս ամէնուն մեզքը խորամանկ Օրմանեան, սորվեր է գիւրին միջոցը՝ տաճկին վրայ կը բարդէ:

Գիրուկ կը հաղորդէ, որ Օրմանեան մեծ դեր է խաղացեր անգլիական որբանոցները փակելու դործին մէջ, նախօրօք համաձայնութիւն մը կայացնելով հանգուցեալ Աղարեանին հետ:

Ականջը խօսի Օրմանեանը պաշտպանող գնչուներուն և անոր անունը յիշող ու յիշել տուող տէրաբէրներու, աղաներու, գնչուներու:

Պօլսի լրագիրներուն մէջ կը կարդանք որ Վանի վարադայ վանքին մէջ բացուած որբանոցի աշակերտաց թիւը 90ի բարձրացեր է: Տեղւոյն լատին որբանոցէն հոն գիւմուղ որքերու թիւը 27ի հասեր է:

Միացեալ Նահանգաց կառավարութիւնը և Խաղաղութեան

Վեհաժողովին զայսպէս ամերիկեան պատգամաւորները Ամերիկեան ծանօթ «կը ցախն» դրեցին ու ըսին հայոց կողմէ իրենց եղած խնդրանքներուն, Վեհաժողովին մէջ ի նպաստ հայոց խնդրոյն միջամտելու: Հոս շատ մը հայեր կը պնդեն թէ այս տեսակ պատասխան մը չը պիտի առնուէր, եթէ ժամանակին և օրինակ որքայէս հայ քաղաքացիները տեղացիներու հետ ազգեցութիւն բանեցնէին Ուաշինգթոնի կառավարութեան վրայ:

Աֆիօն-Պարահիսարէն 30 ոսկի, Վիտինէն 140 ֆրանք և Ամերիկայի Գոնգօրա քաղաքէն 12 և երկրորդ անգամ ալ 7 անդլոսկի զրկուած է Պատրիարքարան ի նպաստ գաւառացի կարօտեալներու:

Տարածի մօտ Գոլ Օլուգ գիւղին ազգայինները (30 տուն) երեք տարիէ ի վեր առանց քահանայի, առանց կրօնական միութարութեան լքուած կը մնան եղեր. որով հետեւ իրենց քահանան աւելի խղճա ծովեր գտնելու համար Տարած հաստատուէր է, և որով հետեւ առաջնորդարանն ալ անտարբեր մնացեր է այս մասին. բոլորակապեցիկ զայցեր և հաստատուեր են եկեղեցիին մէջը:

«Մայրսպօտոյի յունիս 3ին կը հեռագրեն. «կըստի թէ Արթին փաշա Տոտեան Հայկական Ազգային Ժողովի նախագահութեան հրաժարել է այն պատճառով, որ հայ կոմիտէներու օրկան «Դրօշակ» կը հրատարակէ փաշային իրենց հետ ունեցած բանակցութիւնները»:

Նոյն թերթին յունիս 5ին Պօլսէն կը հեռագրեն. «Սոմաթիա թաղի մէջ պատերուն փակցուցած յայտարարութիւններու իւր հեղինակ ձերբակալուած են երեք հայեր, որոնց մասին կըսուի թէ թուրք ստիկանութեան լրատուական ծառայութեան մէջ են»:

ԱՐՏԱՔԻՆ ԼՈՒՐԵՐ

Պեղիբառէ Յունիս 6ին կը հեռագրեն «Թան» ին:

Յունիս 2էն սկսած մինչև 5ը իսկակտն փոքրիկ պատերազմ մը պայթած է Հին-Սերպիոյ կողմի սերպ սահմանապահներու և իտալեր մը Առնաուաներու ու թուրք կանոնաւոր զօրքերու մէջ: Հրացանաձգութիւնը կը կատարուէր քանի մը քիլոմէթր տարածութեան վրայ: Սահմանի պահակներու վրայ յարձակումներ եղան, գրաւուեցան ու նոքրէն յետ առնուեցան: Սերպերէն 7 մեռած և բազմաթիւ վիրաւորներ կան, իսկ թուրքերէն իւր թէ, 40 մարդ և գնդապետ մը ինկած են:

Խաղաղութիւնը հազիւ վերականգնած էր երբ նորէն հրացան

նաճգութիւնը վերսկսեցաւ: Թուրքերը յարձակեցան սահմանի պահականոցներու վրայ և հրգեհեցին զանոնք: Սերպիական երկու գունդեր սահմանն են հասեր և մասնակցեր են այս նոր ընդհարման:

«Թան»ի Պօլսէն Յունիս 6ին կը հեռագրեն նոյն դէպքերու առթիւ:

Սերպ գործակալը երէկ Սուլթանին խմբուց որ անհրաժեշտ են խիստ միջոցներ, որպէս զի իր հրամաններն ու խոստումները գործադրուին: Իսկ Բ. Գրան յայտարար մը տուաւ այդ դէպքերու առթիւ, որով կը յայտարարէ, թէ իր կառավարութիւնը վճռած է կանոնաւոր զօրք գործ դնել յարձակում գործողներուն պատասխանելու և հալածելու նոյն իսկ սահակակոն սահմաններու մէջ:

Սերպիական 8 գունդեր եկած են սահմանը:

ՆԱՄԱԿ ԽՐԱԿՐՈՒԹԵԱՆ

Լահէյի Խաղաղութեան Վեհաժողովին պատուիրակ մը զրկելու համար տեղս գումարուած միութիւնին առթիւ եղած հաշիւներու համարատուութիւնն է հետեւեալը. զոր խնդրենք հաճիք հրատարակել ձեր մօտակայ թիւերէն միոյն մէջ, որուն համար կանխաւ կը յայտնենք շնորհակալութիւնն իս:

Ի զիմաց յանձնախմբին Գանձապետ Մ. Արզաւեան

Table with 2 columns: Item description and Amount. Includes items like 'ՄՈՒՏԻՔ' (12 անձերէ հաւարուած 164.40), 'Պնակի հասոյթ' (113.—), 'ԵԼՔ' (277.40), 'Լահէ տրուած հեռագրի Պատուիրակին յղուած Միութիւնի կազմակերպութեան համար' (37.60), 'Փօսթի ծախքեր 21 նամակի' (11.50), 'Դիւանական ծախք' (1.50), 'Դրամի տարբերութեան' (5.50), 'Ռուսուք, 8 Յունիս' (277.40).

Ն Ա Մ Ս Կ Ա Տ Ո Ւ Փ

Մեր գործակալներէն ու բաժանորդներէն խմբագրութիւնս կը խնդրէ փութացնել բաժնեգրներու առաքումը:

Նախկեալ պիտի հրատարակենք չի վճարողներու անունները:

Նի-եՕՐԲ, Վ. Մ. ին — Ձեր բաց քարթն ստացանք: Որոշ անուն մը ուզած էք մերի օրաբերի համար. այդ անունը «Բաժնագրութիւն շարժում» կը խնդրենք փութացնելք առաքումը: Իսկ ձեր փոխանորդ զով կը կարգէք՝ տարեկան գույք գիտէք:

... Էդ ին. — Նամակներդ առինք: Երկու թիւը կը զրկենք ա-

բիւր կը գրենք նամակ: Շտապեցուր դրամը:

ՌՕՄԱՆ, Ռ. Ն. — Ներկայ 99 տարւոյ բաժնեկիրն 12 ֆր. ստացանք: կը խնդրենք գործակալ ՐԱՄԱԼ և նոր բաժանորդներ հայթայթել մեզ: Ընդունեցէք յարգանքներս:

ԳԷՕՍՏԷՆՃԷ, Ա. Են ին. — Գուք թերթ էիք ուզած և այժմ գուք ալ կը զարկեցնէք. իսկ այժմ զրկուած 5-6 թիւի վճարը ինչու չէք բարեհաճիր զրկել... Ադ ալ հայկական վարմունք է:

ՍՕՖԻԱ, Ս. Ս. ին — Թիւ 129ը կուգէք, բայց ի՞նչ հասցէով: Ս. ով սկսուող շատ անուններ կան: Գրեցէք հասցէն իսկոյն կուղարկենք:

ՍԻԼԻՍՏՐԷ, Ե. Ս. — Երկու նամակն իս և 8 ֆր. առինք: Ստացարբը սուպարութեան կը յանձնենք այս օր. իսկ յօղուածը հրատարակել չենք կարող. անկէ առաջ նոյն նիւթի մասին թղթակցութիւն ունինք:

ՎԱՌՆԱ, ՄԵՆՆՈՒ. — Մինչև որ հեղինակի անունը մեզ յայտնի չլինի, յօղուածը սպել չենք կարող:

ՌՈՒՍՉՈՒԲ, Հերազ. — Կարգադէք նախընթաց պատասխանը:

ԱՄԵՐԻԿԱ, Գարբիէան. — Ձեզմէ ստացանք 5.95 ֆր. Մընի-Օրտորով, բայց անուն տեղ և հասցէ անյայտ է. կը խնդրուի յայտնել մանրամասն հասցէ:

ՀԱՅԿԱՎԱՆ ԸՍՇՕՐԱՆ ԵՎ ՊՈԼԻՍ

Table with 2 columns: Item description and Amount. Includes 'Պատիւ ունիմ ծանուցանելու արգոյ յաճախորդներուս թէ՛ ճաշարանս փոխադրած եմ «Օթլէ Պոլսոյ» կարգը «Օթլէ Գրում-Ասէն» ի ներքեւ, ուր բոստ առաջնոյն խնամով կը պատրաստուին արեւելեան և եւրոպական համատար կերակուրներ: Մաքրութիւն, արագ սպասարկութիւն, չափաւոր գին: 2-3 Վանաւ Մալիկոնեան

ԺԱՂՈՎԴԴԻ ԲԱՆԱՍՏԵՂԸ

Քանաւ-Քարիպան Գրեց ԲԱՐՍ-ԳԱՍՍԱՐ: Պուկարիոյ մէջ գինը 50 սանթիմ, իսկ արտասահմանի համար 60 սանթիմ: Ընկացողները թող գիտեն Շարժումի խմբագրութեան:

ԽՐԱԿՐՈՒԹԻՒՆ ԵՎ ԱՐՃՈՒՄԻ

Կը տպագրուին ամէն լեզուէ այցեւորման, հասցէտոման, նամակագրութիւն, հարաւորեկան հրատարակիչ, մահազգ, ինչպէս նաև պրօչիւրներ:

Գիտենք յոյժ գիւրամատչելի: Ուրիշ քաղաքներէ եկած յանձնարարութիւններ ճշգրութեամբ և փութով կը կատարուին:

ՅԱՆՁՆ՝ ԲԱՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԱՆԻԿ

Отговорникъ: А. СУКЯСОВЪ

Печатница „Взаимность“ Варна